Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Էքուիթի Էյ Էմ» ՓԲԸ

31 դեկտեմբերի 2025թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես
կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

«Էքուիթի Էյ Էմ» ՓԲԸ-ի բաժնետիրոջը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Էքուիթի Էյ Էմ» ՓԲԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի» (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները)* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում: Մենք նաև կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՀՀՄՍԽ կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է

խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն

Նարինե Աճեմյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

26 փետրվարի 2026թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2025թ.	2024թ. (վերաներ-կայացված)
Հասույթ	6	615,190	659,861
		615,190	**659,861**
Հատուցումներ աշխատակիցներին		(454,094)	(485,742)
Մաշվածություն և ամորտիզացիա		(45,117)	(50,330)
Միջնորդավճարների գծով ծախսեր		(130)	(3,702)
Այլ ծախսեր	7	(139,453)	(144,138)
Գործառնական գործունեությունից վնաս		**(23,604)**	**(24,051)**
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	8	53,230	50,628
Ֆինանսական ծախսեր		(3,029)	(4,027)
Փոխարժեքային տարբերությունից զուտ վնաս	9	(13,315)	(4,787)
Ածանցյալ գործիքների գծով իրական արժեքի վնաս, զուտ		(77)	-
Շահույթ մինչև հարկերը		**13,205**	**17,763**
Շահութահարկի գծով ծախս	10	(13,382)	(25,730)
Տարվա վնաս		**(177)**	**(7,967)**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**(177)**	**(7,967)**

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցել այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ. (վերաներ-կայացված)
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		24,942	72,270
Կարճաժակետ բանկային ավանդներ	11	95,451	95,459
Առևտրային և այլ դեբիտորական պատրքեր	12	175,441	120,695
Միջնորդներից ստացման ենթակա գումարներ	13	43,251	55,061
Աճանցյալ ակտիվներ	14	1,092	77
Ամորտիզացված արժեքով ներդրումներ	15	505,504	433,809
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	16	26,959	71,139
Հետաձգված հարկային ակտիվներ	17	12,467	5,726
Ընդամենը ակտիվներ		**885,107**	**854,235**
Պարտավորություններ			
Հաճախորդներից ստացված կանխավճարներ	18	79,145	87,715
Աճանցյալ պարտավորություններ	14	801	484
Վարձակալության գծով պարտավորություն	19	8,022	46,363
Հաշվեգրված պարտավորություններ	20	108,688	33,837
Շահութահարկի գծով պարտավորություններ		13,624	10,832
Ընդամենը պարտավորություններ		**210,280**	**179,231**
Սեփական կապիտալ և պահուստներ			
Բաժնետիրական կապիտալ	21	348,683	348,683
Պահուստային կապիտալ		47,718	45,218
Չբաշխված շահույթ		278,426	281,104
Ընդամենը սեփական կապիտալ և պահուստներ		**674,827**	**675,004**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**885,107**	**854,235**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2026թ. փետրվարի 26-ին.

Արտակ Նահապետյան
Գործադիր տնօրեն

Քնար Պետրոսյան
Ներկայացուցիչ, «Մուռ Հայաստան» ՍՊԸ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Բաժնե-տիրական կապիտալ	Պահուս-տային կապիտալ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդ	348,683	42,718	291,570	682,971
Տարվա վնաս	-	-	(7,967)	(7,967)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**-**	**(7,967)**	**(7,967)**
Չբաշխված շահույթի փոխանցում պահուստային կապտալ	-	2,500	(2,500)	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**348,683**	**45,218**	**281,103**	**675,004**
Տարվա վնաս			(177)	(177)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**-**	**(177)**	**(177)**
Չբաշխված շահույթի փոխանցում պահուստային կապտալ	-	2,500	(2,500)	-
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**348,683**	**47,718**	**278,426**	**674,827**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2025թ.	2024թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
SS և խորհրդատվական ծառայություններից մուտքեր	529,160	611,543
Առևտրային գործունեությունից մուտքեր	172	3,458
Առևտրային հաճախորդներին տրված դրամական միջոցներ	(10,950)	(31,370)
Միջնորդներից ստացված դրամական միջոցներ	12,152	-
Միջնորդներին փոխանցված դրամական միջոցներ	(709)	-
Բանկային ավանդների շարժ	-	40,000
Բանկային ավանդներից ստացված տոկոսային եկամուտներ	8,723	12,761
Աշխատավարձ և այլ համարժեք վճարումներ աշխատակիցներին	(370,368)	(431,103)
Հարթակի սպասարկման վճարներ	(25,096)	(105,269)
Ապահովագրության վճարներ	(6,930)	(14,773)
Վճարված հարկեր և տուրքեր	(9,263)	(42,364)
Իրավաբանական ծառայությունների վճարներ	(20,959)	-
Այլ վճարներ	(60,239)	(45,744)
	45,693	**(2,861)**
Վճարված շահութահարկ	(16,459)	(10,641)
Գործառնական գործունեությունից ստացված (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	**29,234**	**(13,502)**

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	2025թ.	2024թ.
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված տոկոսային եկամուտ	40,721	27,307
Արժեթղթերում ներդրումներից մուտքեր	129,474	389,857
Ներդրումներ արժեթղթերում	(202,414)	(569,224)
Հիմնական միջոցների ձեռքբերում	(1,023)	(6,466)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	-	251
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(33,242)**	**(158,275)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարձակալության պարտավորության մարում	(40,950)	(37,611)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(40,950)**	**(37,611)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում	(44,958)	(209,388)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(2,370)	(8,813)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում	72,270	290,471
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	**24,942**	**72,270**

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Էքուիթի Էյ Էմ» ՓԲԸ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական (ՀՀ) դրամով)

1 Գործառնությունների բնույթը

«Էքուիթի Էյ Էմ» ՓԲԸ-ն («Ընկերություն») ֆինանսական ծառայություններ մատուցող ընկերություն է, որը մասնագիտանում է ֆորեքսի և ածանցյալ գործիքների շուկայի առցանց առևտրում՝ համապատասխան ծառայություններ առաջարկելով պրոֆեսիոնալ և ինստիտուցիոնալ հաճախորդներին MT4 և MT5 առևտրային հարթակների միջոցով: Վերջին տարիներին Ընկերության գործունեության հիմնական ուղղությունը փոփոխվել է՝ կենտրոնանալով կապակցված կողմերին տեղեկատվական տեխնոլոգիաների պահպանման և զարգացման ծառայությունների մատուցման վրա:

2 Ընդհանուր տեղեկատվություն, ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխանության հավաստում և անընդհատության ենթադրություն

«Էքուիթի Էյ Էմ» ՓԲԸ-ն («Ընկերություն») հիմնադրվել է 2012թ. հուլիսի 10-ին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ թիվ 11 գրանցման համարով: Ընկերությունը գործունեություն է ծավալում Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից 2012թ. հուլիսի 10-ին տրված «Ներդրումային ծառայությունների մատուցման մասին» թիվ 0011 լիցենզիայի հիման վրա: 2018թ. Ընկերությունը նաև ձեռք է բերել «իր անունից և իր հաշվին արժեթղթերով գործարքների կատարման» լիցենզիա:

Ընկերությունը վերահսկվում է «Էքուիթի Գրուփ ԼԹԴ» ընկերության կողմից, որին պատկանում է Ընկերության բաժնետոմսերի 100%-ը: «Էքուիթի Գրուփ ԼԹԴ» ընկերությունը գրանցված է Սենթ Հելիերում՝ Ջերսի և վերահսկվում է հիմնական բաժնետեր Աբդուլ Ռաուֆ Ալ Բիթարի կողմից: Ընկերության պետական գրանցման համարն է՝ 7216039:

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2025թ. կազմել է 19 մարդ (2024թ.՝ 24 մարդ):

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0010, Վ. Սարգսյան փող. 26/1, սենյակ 606-609:

Համապատասխանություն և անընդհատություն

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքներով, քանի որ ղեկավարությունը կարծում է, որ Ընկերությունն ունի համապատասխան ռեսուրսներ տեսանելի ապագայում անընդհատ գործունեություն իրականացնելու համար: Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ շահութաբերության կանխատեսումը, կապիտալի նկատմամբ իրավական պահանջները և ֆինանսավորման կարիքները: Գնահատումը ներառում է նաև ողջամտորեն հնարավոր անկումային տնտեսական սցենարների և դրանց հնարավոր ազդեցությունների դիտարկումը Ընկերության շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա:

Գործարար միջավայր

2025թ. Հայաստանի գործարար միջավայրը շարունակում է գտնվել աշխարհաքաղաքական լարվածության, տարածաշրջանային անվտանգության ռիսկերի և գլոբալ տնտեսության փոփոխվող պայմանների ազդեցության տակ:

Ընթացիկ տարում տնտեսական ցուցանիշները տարբեր ոլորտներում անհավասար են եղել: Շարունակական աճը հիմնականում ապահովվել է առևտրի, ծառայությունների և շինարարության ոլորտներում՝ արտացոլելով մասնավոր սպառման և ներդրումային ակտիվության կայունությունը: Թեպետ նախկինում որոշակի ենթաճյուղերի կրճատումից կրած ազդեցության՝ արդյունաբերական արտադրությունը վերջին հաշվետու ժամանակաշրջանում ցուցաբերել է կայունություն և չափավոր բարելավում՝ նպաստելով արտադրական որոշակի գործունեության վերականգնմանը:

Ֆինանսական ոլորտը կայուն է մնացել՝ բանկային համակարգի բավարար կապիտալացվածությամբ և բանկային համակարգի պատշաճ վերահսկողությամբ պայմանավորված: Չնայած արտաքին ռիսկերի առկայությանը՝ կարգավորող վերահսկողությունը և վերահսկողական պրակտիկան շարունակաբար ապահովել են ֆինանսական հաստատությունների իրացվելիությունը, վճարունակությունը և գործառնական կայունությունը:

2025թ. պետական բյուջեի և վերջերս կատարված արտաքին գնահատման համաձայն՝ Հայաստանի տնտեսական աճը կազմել է 5.1%, իսկ 2026թ. կանխատեսվում է աննշան աճ նախորդ տարվա համեմատ:

Ղեկավարությունը գնահատել է տնտեսական ընթացիկ միջավայրի ազդեցությունը Ընկերության գործունեության վրա և արտացոլել է դա սույն ֆինանսական հաշվետվություններում: Սակայն տնտեսական և քաղաքական հետագա իրավիճակը կարող է տարբերվել ներկայիս ակնկալիքներից, և նման տարբերությունները կարող են ազդել Ընկերության ֆինանսական վիճակի, արդյունքի և դրամական հոսքերի վրա:

3 Նոր կամ վերանայված ստանդարտներ կամ մեկնաբանություններ

3.1 2025թ. հունվարի 1-ի դրությամբ ընդունված նոր ստանդարտներ

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2025թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՖՀՄՍ մեկնաբանությունների կոմիտեի կողմից:

ՀՀՄՍ 21 *«Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ»* ստանդարտի փոփոխությունը՝ կապված *«Փոխանակելիության բացակայության»* հետ առաջին անգամ կիրառվել է 2025թ., որը սահմանում է պահանջներ՝ գնահատելու, թե երբ է արժույթը փոխարկելի այլ արժույթի նկատմամբ, և երբ՝ ոչ: Ստանդարտի այս փոփոխության ընդունումը ազդեցություն չի ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

3.2 Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

- ՖՀՄՍ 18 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»*

  2024թ. ապրիլին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 18 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»* ստանդարտը, որը փոխարինում է ՀՀՄՍ 1 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»* ստանդարտը: Չնայած ՖՀՄՍ 18-ը ներառում է ՀՀՄՍ 1-ի բազմաթիվ պահանջներ, այն ներկայացնում է նոր պահանջներ՝ ֆինանսական հաշվետվությունների կառուցվածքը բարելավելու և ներդրողներին ավելի մանրամասն ու օգտակար տեղեկատվություն տրամադրելու նպատակով, ներառյալ՝

  - շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում երկու նոր ենթագումարի սահմանում՝ գործառնական շահույթ և շահույթ կամ վնաս մինչև ֆինանսավորումը և հարկերը

- շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտների և ծախսերի դասակարգում հետևյալ հինգ կատեգորիաներից մեկում՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, հարկեր և ընդհատված գործառնություններ
- ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափանիշների բացահայտման նոր պահանջ
- ֆինանսական հաշվետվություններում և կից ծանոթագրություններում ներկայացվող տեղեկատվության միավորման և տարանջատման սկզբունքների բարելավում

Նախկինում ՀՀՄՍ 1-ում ներառված որոշ բացահայտման պահանջներ տեղափոխվել են ՀՀՄՍ 8՝ առանց էական փոփոխությունների: Սա հատկապես վերաբերում է հաշվապահական հաշվառման քաղաքականության և գնահատման անորոշության աղբյուրների բացահայտումներին: Այս փոփոխությունների արդյունքում ՀՀՄՍ 8-ը կվերանվանվի *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքներ»*:

Ի հավելումն, ՀՀՄՍ 7 *«Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին»* ստանդարտում կատարվել են սահմանափակ փոփոխություններ, որոնք ներառում են անուղղակի մեթոդով պատրաստված հաշվետվության գործառնական գործունեությունից դրամական հոսքերի որոշման մեկնարկային կետի փոփոխությունը «շահույթ կամ վնասից» «գործառնական շահույթ կամ վնաս» և շահաբաժիններից և տոկոսներից դրամական հոսքերի դասակարգման ընտրանքի վերացումը: Բացի այդ, կան հետևողական փոփոխություններ մի շարք այլ ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներում:

ՖՀՄՍ 18-ը ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար՝ ավելի վաղ կիրառման հնարավորությամբ: ՖՀՄՍ 18-ը կկիրառվի հետընթաց՝ կիրառելով հատուկ անցումային դրույթներ:

Ընկերությունը ներկայումս գնահատում է ՖՀՄՍ 18-ի ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների վրա:

Ղեկավարության գնահատմամբ չի ակնկալվում, որ այլ նոր ստանդարտները, փոփոխությունները և մեկնաբանությունները, որոնք չեն կիրառվել ընթացիկ տարում, էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *«Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ»* (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ) (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)
- *«Բնությունից կախված էլեկտրաէներգիային հղումով պայմանագրեր»* (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ) (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)
- ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների տարեկան բարեփոխումներ - Հատոր 11 (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)
- ՖՀՄՍ 19 *«Դուստր ձեռնարկություններ առանց հանրային հաշվետվողականության. բացահայտումներ»* (ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)
- ՖՀՄՍ 19-ի՝ *«Դուստր ձեռնարկություններ առանց հանրային հաշվետվողականության. բացահայտումներ»*, փոփոխություններ (ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար):

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն էական հոդվածներ

4.1 Պատրաստման հիմքերը

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով:

4.2 Կլիմային առնչվող հարցեր

Ընկերությունը և նրա հաճախորդները ապագայում կարող են բախվել կլիմայի հետ կապված զգալի ռիսկերի: Այս ռիսկերը կարող են ֆինանսական կորուստների և անբարենպաստ ոչ ֆինանսական ազդեցությունների պատճառ հանդիսանալ, որոնք կարող են բխել կլիմայի փոփոխության քաղաքական, տնտեսական և բնապահպանական արձագանքներից: Կլիմայական ռիսկերի հիմնական աղբյուրները սահմանվել են որպես ֆիզիկական և անցումային ռիսկեր:

Ֆիզիկական ռիսկերն առաջանում են եղանակային կտրուկ իրադարձությունների հետևանքով, ինչպիսիք են փոթորիկները, ջրհեղեղները և անտառային հրդեհները, ինչպես նաև կլիմայական պայմանների երկարաժամկետ փոփոխությունները, ինչպիսիք են կայուն բարձր ջերմաստիճանը, ջերմային ալիքները, և երաշտը:

Անցումային ռիսկերը կարող են առաջանալ զրոյական արտանետումներով տնտեսության անցնելու հետևանքով, ինչպիսիք են օրենքների և կանոնակարգերի փոփոխությունները, դատավարությունները, որոնք կապված են չեզոքացման կամ հարմարվելու ձախողման հետ, և որոշակի ապրանքների, արտադրանքների և ծառայությունների առաջարկի և պահանջարկի փոփոխությունների հետևանքով՝ կապված սպառողների վարքագծի և ներդրողների պահանջարկի փոփոխության հետ:

Այս ռիսկերը ստանում են աճող կարգավորիչ, քաղաքական և հասարակական վերահսկողություն ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակով: Թեև որոշ ֆիզիկական ռիսկեր կարող են կանխատեսելի լինել, կան զգալի անորոշություններ դրանց դրսևորման չափի և ժամանակի վերաբերյալ: Անցումային ռիսկերի առումով անորոշությունը պահպանվում է առաջիկա կարգավորող և քաղաքական փոփոխությունների, սպառողների պահանջարկի և մատակարարման շղթաների փոփոխությունների հետ կապված:

Ընկերությունը գիտակցում է հետագա ջանքերի անհրաժեշտությունը՝ կլիմայական գործոնները Ընկերության ռիսկերի կառավարման գնահատականներում և արձանագրություններում ամբողջությամբ ինտեգրելու գործում:

4.3 Արժույթ

Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (ՀՀ դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել կիրառելի է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: ՀՀ դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը.

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	381.36	396.56
ՀՀ դրամ/1 եվրո	449.01	413.89

Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը):

4.4 Հասույթ

Պայմանագրերից հասույթ

Հասույթի ճանաչման համար Ընկերությունը հետևում է ՖՀՄ 15 *«Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»* ստանդարտը:

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Ընկերության կողմից տրամադրվող ցանկացած առևտրային զեղչերի և քանակային զիջումների գումարները:

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին, կամ ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Ընկերությունը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց հաճախորդներից ստացված կանխավճարները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ: Նման ձևով, եթե Ընկերությունը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Ընկերությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

Հասույթը հիմնականում առաջանում է.

- միջնորդավճարներից և այլ վճարներից,
- Խորհրդատվական և SS ծառայություններից:

Խորհրդատվական և SS ծառայություններից հասույթ

Ընկերությունն ակտիվորեն զբաղվում է իր կապակցված կողմին SS ծառայությունների մատուցմամբ՝ ծրագրային ապահովման և տվյալագիտական մշակման, փորձարկման, սպասարկման միջոցով: Հիմնական SS ծառայությունները ներառում են SS աջակցություն, բարելավող գործիքների մշակում և հարակից ծառայություններ:

Միջնորդավճարներ և այլ վճարներ

Միջնորդավճարները հաճախորդներից գանձվում են դիրքը բացելու պահին: Միջնորդավճարները հաշվարկվում են՝ հաշվի առնելով գործարքների ծավալը՝ մեկ միլիոնի հաշվով, լոտի չափը, լոտի չափի վրա կիրառվող հավելագինը կամ տոկոսը՝ այն արժույթով, որով բացված է հաճախորդի հաշիվը:

Սվոփները ներկայացնում են երկու արժույթների միջև տոկոսադրույքների տարբերությունն արժութային զույգում: Հաճախորդները կա՛մ վճարում են, կա՛մ ստանում սվոփներ՝ մինչև հաջորդ աշխատանքային օրը դիրքը պահելու ընթացքում:

Տոկոսային եկամուտ

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը զեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքը:

4.5 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների հոդվածները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգչային սարքավորումներ	-	1-3 տարի
Արտադրատնտեսական գույք	-	8 տարի:

Վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ծախսումներն ամորտիզացվում են վարձակալության պայմանագրի ժամկետի ընթացքում:

4.6 Վարձակալված ակտիվներ

Ընկերությունը՝ որպես վարձակալ

Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն պայմանագրի գործողության սկզբում: Վարձակալության պայմանագիրն իրավունք է տալիս որոշակի ժամանակահատվածում սահմանելու որոշակիացված ակտիվի օգտագործման ուղղությունները և ստանալու որոշակիացված ակտիվից բոլոր տնտեսական օգուտները՝ փոխհատուցման դիմաց:

Վարձակալության ճանաչումը և չափումը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Ընկերությունը իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Ընկերության կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Ընկերությունը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից

ամենավաղը: Ընկերությունը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվն արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան:

Մեկնարկի ամսաթվին Ընկերությունը չափում է վարձակալության գծով պարտավորությունն այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումն արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է զրոյի:

4.7 Մաշվող ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ:

4.8 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով չափվող,

- իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Ընկերության՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որն արտացոլված է այլ ծախսերում: Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են Ծանոթագրություն 24-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունն աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները, ավանդները բանկերում, պարտատոմսերը, տրված վարկերը և առևտրային դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Ֆինանսական ակտիվներ՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են «հավաքագրման համար պահվող» կամ «հավաքագրման և վաճառքի համար պահվող» բիզնես մոդելներից տարբեր մոդելի շրջանակներում, դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Հետագայում, անկախ բիզնես մոդելից, բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց պայմանագրային դրամական հոսքերը չեն հանդիսանում միայն մայր գումարի և հաշվարկված տոկոսի մարում, հաշվառվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները դասակարգվում են այս կատեգորիայում, բացառությամբ հեջավորման գործիքների, որոնց համար գործում են հեջավորման հաշվառմանը ներկայացվող պահանջները:

Այս կատեգորիայի ակտիվները ներառում են գների տարբերության պայմանագրերը և դասակարգվում են որպես ածանցյալ ֆինանսական գործիքներ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են փոխառային տիպի ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով առևտրային դեբիտորական պարտքերը, առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները, որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն:

Պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Ընկերությունը դիտարկում է համապատասխան բազմազան տեղեկատվություն ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Ապագայամետ գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ն ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար:

Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են հաճախորդների ավանդները, հաշվեգրված վարձակալություններն ու այլ պարտավորություններ և ածանցյալ ֆինանսական գործիքներ:

Ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով ՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները (որտեղ կիրառելի է), եթե Ընկերությունը ֆինանսական պարտավորությունը չի դասակարգել որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Իրական արժեքի և անվանական արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հետագայում ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ ածանցյալ գործիքների, որոնք հետագայում հաշվառվում են իրական արժեքով, իսկ օգուտներն ու վնասները ճանաչվում են շահույթում և վնասում:

Տոկոսների հետ կապված ծախսերը և շահույթում կամ վնասում գրանցված գործիքի իրական արժեքում փոփոխությունները, եթե այդպիսիք կան, ներառվում են ֆինանսական ծախսում կամ ֆինանսական եկամտում:

4.9 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, դրամական միջոցները՝ ճանապարհին, ցպահանջ ավանդները, ինչպես նաև այլ կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումները, որոնց մարման ժամկետը ձեռքբերման օրից 90 օր է, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով:

4.10 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

4.11 Շահութահարկ

Ընթացիկ հարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

4.12 Սեփական կապիտալ, պահուստներ և շահաբաժիններ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Բաժնետիրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքը:

Կուտակված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

4.13 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները:

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցում են ծառայություններ, Ընկերությունն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությունը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Ընկերությունն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

4.14 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարության կատարած նշանակալի դատողություններ և գնահատման անորոշություն

ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են իրատեսական:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը

Հետաձգված հարկային ակտիվները ներկայացնում են շահութահարկի այն գումարը, որը կարող է հաշվանցվել ապագա հարկվող շահույթից նվազեցումների դիմաց և ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա համապատասխան հարկային արտոնության իրացման բարձր հավանականություն: Սա ենթադրում է ժամանակավոր տարբերությունների առկայություն, որոնք ապագայում ակնկալվում է վերականգնել, և բավարար ապագա հարկվող շահույթ, որոնց դիմաց ակնկալվում է օգտագործել նվազեցումները:

Ընկերության ղեկավարությունը կատարել է ապագա հարկվող շահույթի վերաբերյալ գնահատականներ, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են հավանական և ողջամիտ: Այդ գնահատականների հիմնական ենթադրություններն Ընկերության ակնկալվող եկամուտներն ու ծախսերն են առաջիկա տարիներին: Ընկերությունն ունի գործող պայմանագրեր՝ շարունակելու կայուն եկամուտների հոսքերի սպասարկումը 2026 թվականին: Ղեկավարությունը կանխատեսում է, որ Ընկերությունն ապագա ժամանակաշրջաններում կապահովի բավարար հարկվող շահույթ՝ նվազեցվող ժամանակավոր տարբերություններն օգտագործելու համար:

Ընկերությունը չի ակնկալում, որ շրջակա միջավայրի մակրոտնտեսական փոփոխությունները կհանգեցնեն անբարենպաստ ազդեցությունների հետաձգված շահութահարկի փոխհատուցման մնացորդների

ղեկավարության գնահատումների վրա, սակայն ղեկավարությունը կվերանայի նման գնահատումների ողջամտությունը յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների և վարձակալության գծով պարտավորությունների արժեքը հիմնված է ղեկավարության՝ վարձակալության ժամկետների գնահատականներից, ինչպես նաև լրացուցիչ փոխառության դրույքից, որն օգտագործվել է վարձակալության գծով վճարները զեղչելու համար: Այս վարձակալության ժամկետները համապատասխանում են պայմանագրի այն ժամանակաշրջանին, որը հնարավոր չէ չեղարկել, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերությունը խելամտորեն վստահ է երկարացման տարբերակների օգտագործման մեջ: Վարձակալության ժամկետը գնահատելիս՝ ղեկավարությունը հաշվի է առնում բոլոր այն փաստերն ու հանգամանքները, որոնք տնտեսական խթան են ստեղծում Ընկերության համար վարձակալությունը երկարեցնելու տարբերակ կիրառելու նպատակով: Երկարաձգման տարբերակները և/կամ դադարեցման տարբերակներից հետո ժամկետները ներառվում են վարձակալության ժամկետում միայն այն դեպքում, երբ վարձակալությունը ողջամտորեն վստահ է երկարաձգվելու կամ չդադարելու համար:

Վարձակալված գրասենյակի համար գործոնները, որոնք սովորաբար ամենաարդիականն են, հետևյալն են՝ (ա) եթե կան նշանակալի տույժեր, եթե Ընկերությունը նախապես լուծի պայմանագիրը, և (բ) եթե վարձակալության գույքի ցանկացած բարելավում ակնկալվում է, որ կունենա զգալի մնացորդային արժեք: Ընկերությունը ողջամտորեն վստահ է երկարաձգելու և չլուծելու վարձակալության պայմանագիրը: Ընկերությունը հաշվի է առնում այլ գործոններ, ներառյալ վարձակալության պատմական տևողությունը և ծախսերը և բիզնեսի խափանումները, որոնք անհրաժեշտ են վարձակալված ակտիվը փոխարինելու համար: Այս գործոնների փոփոխությունները կարող են ազդել վարձակալության գնահատված ժամկետի և օգտագործման իրավունքի ձևով ակտիվների և վարձակալության գծով պարտավորությունների ներկայացված արժեքի վրա:

5 Ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

Նախորդ տարիներին առնչվող սխալների բացահայտման պատճառով 2025թ. ընթացքում Ընկերությունը որոշել է վերաներկայացնել նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունները՝ համաձայն ՀՀՄՍ 8-ի *«Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ»*:

Ընկերությունը կիրառում է հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները և իրականացնում է նախորդ տարիների սխալների ուղղումը հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո թողարկման համար հայտարարված ֆինանսական հաշվետվությունների առաջին փաթեթում՝ վերահաշվարկելով ներկայացված նախորդող ժամանակաշրջանների համեմատելի այն գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ եթե սխալը տեղի է ունեցել նախքան ամենավաղ ներկայացված ժամանակաշրջանը, այդ դեպքում՝ վերահաշվարկելով ներկայացված ամենավաղ նախորդող ժամանակաշրջանի համար ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները: Ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ նախորդ տարիների համադրելի տեղեկատվությունը, ներկայացված են այնպես, կարծես ուղղումը կատարվել է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում առաջացել է դրա կատարման անհրաժեշտությունը: Հետևաբար, յուրաքանչյուր ներկայացված ժամանակաշրջանին վերաբերող ուղղման գումարը վերագրվում է այդ տարվա ֆինանսական տեղեկատվությանը:

Դասակարգման սխալի ուղղում. հատուցումներ աշխատակիցներին և հասույթ

2024թ. ընթացքում Ընկերության մասնագետների կողմից EGM Labs-ին (կապակցված կողմ) մատուցված ծառայություններին առնչվող որոշակի ծախսեր՝ կապված SS նախագծերի աջակցության և մշակման ծառայությունների հետ, սխալմամբ գրանցվել են որպես աշխատակիցներին հատուցումների գծով ծախսերի նվազեցում:

Ղեկավարությունը որոշել է, որ այս գումարները ներկայացրել են կապակցված կողմին մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցում և պետք է ճանաչվեին որպես եկամուտ՝ աշխատակիցներին հատուցումների գծով ծախսերի համապատասխան աճով:

Այս սխալն ուղղելու համար Շահույթի կամ վնասի այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ձևակերպվել է վերադասակարգման ճշգրտում, ինչի արդյունքում աճել են և աշխատակիցներին հատուցումների գծով ծախսերը, և 2024թ. ավարտված տարվա հասույթը՝ 79,312 հազար ՀՀ դրամով:

Այս սխալի ուղղումն ազդեցություն չի ունեցել 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վրա:

6 Հասույթ

	2025թ.	2024թ. (վերաներ-կայացված)
SS ծառայություններից հասույթ	614,407	654,162
Բրոքերային ծառայություններից հասույթ	783	5,699
Ընդամենը հասույթ	**615,190**	**659,861**

SS ծառայություններից հասույթն ամբողջությամբ առաջանում է Ընկերության կապակցված կողմերից (ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ).

	2025թ.	2024թ. (վերաներ-կայացված)
Bloom Capital LP	529,810	574,850
EGM Labs Ltd	84,597	79,312
Ընդամենը հասույթ	**614,407**	**654,162**

Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում:

7 Այլ ծախսեր

	2025թ.	2024թ.
Իրավաբանական ծառայություններ	32,445	6,042
Չփոխհատուցվող հարկեր	30,054	40,546
Արտոնագրային վճարներ	24,043	19,633
Մասնագիտական ծառայություններ	19,616	19,355
Բիզնեսի ապահովագրություն	5,892	12,043
Տեխնիկական սպասարկում	4,635	30,988
Ճանապարհորդական ծախսեր	6,285	3,998
Գրասենյակային ծախսեր և կոմունալ ծառայություններ	8,051	4,510
Բանկային փոխանցումների համար վճարներ	1,355	1,272
Այլ	7,077	5,751
Ընդամենը այլ ծախսեր	**139,453**	**144,138**

8 Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով

	2025թ.	2024թ.
Արժեթղթերում ներդրումներից եկամուտ	44,515	39,195
Բանկային ավանդներից տոկոսային եկամուտ	8,715	11,433
Ընդամենը տոկոսային եկամուտ	**53,230**	**50,628**

9 Փոխարժեքային տարբերությունից զուտ վնաս

	2025թ.	2024թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	(38,549)	(13,271)
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	25,234	8,484
Փոխարժեքային տարբերությունից զուտ վնաս	**(13,315)**	**(4,787)**

10 Շահութահարկի գծով ծախս

	2025թ.	2024թ.
Ընթացիկ հարկ	20,123	10,831
Հետաձգված հարկ (տե՛ս Ծանոթագրություն 17)	(6,741)	14,899
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**13,382**	**25,730**

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

	2025թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2024թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների)	**13,205**		**17,763**	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2024թ.՝ 18%)	2,377	18.0	3,197	18.0
Կուտակված հարկային վնասների օգտագործում	-	-	15,178	85.5
Հետաձգված հարկի ազդեցություն	(6,741)	(51.1)	(279)	(1.6)
Մշտական տարբերություններ փոխարժեքային (օգուտի) վնասի գծով	2,397	18.2	862	4.9
Այլ մշտական տարբերություններ չնվազեցվող ծախսերի գծով	15,349	116.2	6,772	38.1
Շահութահարկի գծով ծախս	**13,382**	**101.34**	**25,730**	**144.9**

11 Կարճաժամկետ բանկային ավանդներ

	Վարկանիշ (Moody's)	Արժույթ	Տոկոսադրույք	2025թ.	2024թ.
«Ինոկոբանկ» ՓԲԸ	Ba3	ՀՀ դրամ	9.8%	63,641	63,641
«Ամերիաբանկ» ՓԲԸ	Ba2	ՀՀ դրամ	9.45%	31,810	31,818
				95,451	**95,459**

12 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	2025թ.	2024թ.
Կապակցված կողմերի գծով դեբիտորական պարտքեր՝ SS և խորհրդատվական ծառայություններ	157,712	79,312
Կանխավճարված ծախսեր	16,817	1,646
Կանխավճարված հարկեր	-	13,802
Այլ դեբիտորական պարտքեր	912	25,935
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	**175,441**	**120,695**

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Ծանոթագրություն 25.2-ում ներկայացված են պարտքային ռիսկի և ակնկալվող պարտքային ռիսկի վերլուծության վերաբերյալ բացահայտումները:

Տե՛ս Ծանոթագրություն 25.1-ը՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

13 Միջնորդներից ստացման ենթակա գումարներ

Միջնորդների մոտ պահվող գումարները ներկայացնում են «Bloom Capital LP»-ին (կապակցված կողմ) փոխանցված գումարները, որը բրոքերային ծառայություններ է մատուցում Ընկերությանը: Ընկերությունը «Bloom Capital LP»-ին սահմանել է որպես իրացվելի միջոցների մատակարար՝ արտարժույթի սփոթ պայմանագրերով, մետաղական սփոթ պայմանագրերով և գնի տարբերությամբ պայմանագրերով հաճախորդների առևտրային գործարքների ապահովման նպատակով:

Տե՛ս Ծանոթագրություն 25՝ միջնորդներից ստացման ենթակա գումարների արժույթների բացահայտման համար:

14 Ածանցյալ գործիքներ

Ածանցյալ ֆինանսական գործիքները ներառում են տարեվերջում դրական և բացասական դիրքով գների տարբերության պայմանագրերի (CFDs) վերջնական մնացորդների գծով օգուտներն ու վնասները:

15 Ամորտիզացված արժեքով ներդրումներ

Արժեթղթերում ներդրումների մանրամասները ներկայացված են ստորև.

	Վարկանիշ (Moody's)	Քանակ	Անվանական արժեք	Արժույթ	Արժեկտրոնի տոկոսադրույք	Մարման ժամկետ	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
«Եվրոթերմ» ՓԲԸ	B1**	5,000	10,000	ՀՀ դրամ	12.50%	Նոյեմբեր 2026թ.	50,556	50,556

	Վարկանիշ (Moody's)	Քանակ	Անվանական արժեք	Արժույթ	Արժեկտրոնի տոկոսադրույք	Մարման ժամկետ	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
«Ֆինքա» ՈՒՎԿ	Ba3*	700	50,000	ՀՀ դրամ	11.75%	Նոյեմբեր 2027թ.	35,643	35,643
«Ֆինքա» ՈՒՎԿ	Ba3*	500	100	ԱՄՆ դոլար	7.50%	Մայիս 2025թ.	-	19,955
«Ֆասթ Բանկ» ՓԲԸ	Ba3*	550	100,000	ՀՀ դրամ	10.25%	Հոկտեմբեր 2027թ.	56,263	56,263
«Ֆասթ Բանկ» ՓԲԸ	Ba3*	1,000	100	ԱՄՆ դոլար	6.00%	Դեկտեմբեր 2025թ.	38,238	39,761
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	Ba3	500	100,000	ՀՀ դրամ	11.40%	Դեկտեմբեր 2026թ.	50,306	50,306
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	Ba3	500	100	ԱՄՆ դոլար	7.25%	Հուլիս 2028թ.	19,702	20,487
«Կոնվեսր Բանկ» ՓԲԸ	Ba3	1,000	50,000	ՀՀ դրամ	10.25%	Ապրիլ 2026թ.	51,026	51,040
«ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ	Ba3	400	100,000	ՀՀ դրամ	11.50%	Դեկտեմբեր 2026թ.	41,091	-
«Վիվա Արմենիա» ՓԲԸ	B1**	750	100	ԱՄՆ դոլար	7.65%	Դեկտեմբեր 2028թ.	49,061	-
							391,886	**324,011**

** Հայաստանի Հանրապետության Moody's-ի վարկանիշի օգտագործումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ֆինանսական կազմակերպությունը չի գնահատվում Moody's-ի, Fitch-ի և S&P-ի կողմից: Ֆինանսական կազմակերպությունը կարգավորվում է Հայաստանի Կենտրոնական բանկի կողմից:*

*** Հայաստանի Հանրապետության Moody's-ի վարկանիշն օգտագործվում է մեկ աստիճան ցածր, քանի որ թողարկողը չի գնահատվում Moody's-ի, Fitch-ի և S&P-ի կողմից:*

	Վարկանիշ (Moody's)	Անվանական արժեք	Պայմանագրային գումար	Արժույթ	Եկամտաբերություն	Մարման ժամկետ	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Պետական պարտատոմս	Ba3	65,000	60,120	ՀՀ դրամ	8.05%	Օգոստոս 2026թ.	61,650	-
Պետական պարտատոմս	Ba3	55,000	51,686	ՀՀ դրամ	8.07%	Մարտ 2026թ.	54,258	-
Պետական պարտատոմս	Ba3	60,000	54,967	ՀՀ դրամ	9.08%	Սեպտեմբեր 2025թ.	-	56,525
Պետական պարտատոմս	Ba3	55,000	50,266	ՀՀ դրամ	9.34%	Մայիս 2025թ.	-	53,273
							115,908	**109,798**

Ամորտիզացված արժեքով ներկայացված վերոհիշյալ ներդրումների ընդհանուր արժեքը բացահայտված է համախառն գումարով՝ առանց 2,290 հազար ՀՀ դրամի չափով ակնկալվող պարտքային կորուստների պահուստի :

Ծանոթագրություն 25.2-ում ներկայացված են պարտքային ռիսկի վերլուծության վերաբերյալ բացահայտումները:

Տե՛ս Ծանոթագրություն 25.1-ը՝ ներդրումների արժույթների բացահայտման համար:

16 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

	Համակարգ-չային սարքավորում-ներ, արտադարա-տնտեսական գույք	Օգտագործ-ման իրավունքի ձևով ակտիվներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	85,835	118,463	794	205,092
Ավելացում	6,461	77,625	-	84,086
Օտարում	(1,484)	(118,463)	-	(119,947)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**90,812**	**77,625**	**794**	**169,231**
Ավելացում	1,096		-	1,096
Օտարում	(11,110)	-	(794)	(11,904)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**80,798**	**77,625**	**-**	**158,423**
Կուտակված մաշվածություն և արժեզրկում				
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	55,411	111,050	791	167,252
Տարվա հաշվարկ	14,164	32,210	3	46,377
Օտարման հետևանքով դուրսգրում	(1,027)	(114,510)	-	(115,537)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**68,548**	**28,750**	**794**	**98,092**
Տարվա հաշվարկ	12,282	32,835	-	45,117
Օտարման հետևանքով դուրսգրում	(10,951)	-	(794)	(11,745)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**69,879**	**61,585**	**-**	**131,464**
Հաշվեկշռային արժեք				
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**22,264**	**48,875**	**-**	**71,139**
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**10,919**	**16,040**	**-**	**26,959**

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ներառում են գրասենյակային տարածքի վարձակալությունը: Ընկերությունը գրասենյակային տարածք է վարձակալում «Էրեբունի Պլազա»-ում, որը գտնվում է ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1 հասցեում: Ընկերությունը գրասենյակային տարածքը, վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ծախսումների հետ միասին ճանաչել է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և մաշվածություն է հաշվարկել վարձակալության ժամկետի ընթացքում, որը կազմում է երեք տարի: Ընկերությունը վարձակալության ժամկետի սկզբում կատարել է կանխավճար: Համապատասխան պարտավորությունը ներկայացված է «վարձակալական պարտավորություններ» հովդածի ներքո:

17 Հետաձգված հարկային ակտիվներ

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

	2025թ.	2024թ.
Տարեսկզբի մնացորդ	5,726	20,625
Շահույթում կամ վնասում ճանաչված (ծախս) փոխհատուցում	6,741	(14,899)
Տարեվերջի մնացորդ	**12,467**	**5,726**

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	1 հունվարի 2025թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2025թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Վարձակալության գծով պարտավորություններ	8,345	(6,901)	1,444
Ածանցյալ պարտավորություններ	87	(87)	-
Հաշվեգրված ծախսեր	6,105	7,805	13,910
	14,537	**817**	**15,354**
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	8,797	(5,910)	2,887
Ածանցյալ ակտիվներ	14	(14)	-
	8,811	(5,924)	2,887
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	**5,726**	**6,741**	**12,467**

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	1 հունվարի 2024թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2024թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Վարձակալության գծով պարտավորություններ	34	8,311	8,345
Ածանցյալ պարտավորություններ	6,608	(6,521)	87
Հաշվեգրված ծախսեր	164	5,941	6,105
Հարկային վնաս	15,178	(15,178)	-
	21,984	**(7,447)**	**14,537**
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	1,334	7,463	8,797
Ածանցյալ ակտիվներ	25	(11)	14
	1,359	**7,452**	**8,811**
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	**20,625**	**(14,899)**	**5,726**

18 Հաճախորդներից ստացված կանխավճարներ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Հաճախորդներից ստացված կանխավճարներ և միջնորդներին վճարման ենթակա գումարներ	79,145	87,715
Ընդամենը պայմանագրային պարտավորություններ	**79,145**	**87,715**

Հաճախորդներից ստացված կանխավճարները ներկայացնում են առևտրային հաճախորդներից ստացված գումարներ՝ առևտրային հարթակին մուտք գործելու և առևտրային գործունեություն իրագործելու համար:

Ընկերությունը կնքել է «Մասնագիտական հաճախորդի պայմանագիր» և «Սեփականության իրավունքի փոխանցման ֆինանսական գրավի պայմանագիր», որոնց համաձայն հաճախորդը պայմանագրով համաձայնություն է տալիս առ այն, որ Ընկերությանը փոխանցված ցանկացած դրամական միջոցի սեփականությունն անմիջապես անցնում է Ընկերությանը ստացումից հետո: Այս պայմանագրի համաձայն՝ դրամական միջոցները չեն պահվում Ընկերության կողմից հաճախորդի անունից, այլ դառնում են Ընկերության սեփական ակտիվներ՝ համապատասխան պայմանագրային պարտավորությամբ՝ հաճախորդին համարժեք գումար վերադարձնել համաձայնեցված պայմաններին համապատասխան:

Համաձայն պայմանագրի՝ փոխանցված միջոցները ճանաչվում են որպես Ընկերության ակտիվներ «դրամական միջոցներ և դրանց համարժեքներ» հոդվածում, իսկ համապատասխան պարտավորությունը ճանաչվում է «հաճախորդներից ստացված կանխավճարներ» հոդվածում՝ համարժեք գումար վերադարձնելու պարտավորությունը արտացոլելու համար:

Հետագայում հաճախորդներից կատարված կանխավճարները ճշգրտվում են հաճախորդների առևտրային շահույթի կամ վնասի և միջնորդավճարների արդյունքում:

«Հաճախորդներից ստացված կանխավճարներ» հոդվածում ներառված է հաճախորդի՝ տարվա ընթացքում կասեցված առևտրային հաշվին վերաբերող գումարը: Մնացորդը նախատեսված էր վերադարձնել հաճախորդին՝ համաձայն պայմանագրային պայմանների, սակայն հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության հաշիվներում մնացել է չմարված 38,455 հազար ՀՀ դրամ (100,836 ԱՄՆ դոլար):

Հաճախորդներից ստացված կանխավճարները և միջնորդներին վճարման ենթակա գումարների արժույթները ներկայացված են ծանոթագրություն 25-ում:

19 Վարձակալության գծով պարտավորություն

Վարձակալության գծով պարտավորությունները ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ.

	2025թ.	2024թ.
Մեկ տարվա ընթացքում		
Վարձավճարներ	8,130	40,950
Ֆինանսական ծախս	(108)	(2,608)
	8,022	**38,342**
Երկրորդից երրորդ տարիների ընթացքում		8,129
Վարձավճարներ	-	(108)
Ֆինանսական ծախս	-	8,021
	-	**46,363**
Զուտ ներկա արժեք	**8,022**	**40,950**

Ընկերությունը գրասենյակային տարածք է վարձակալում «Էրեբունի Պլազա»-ում, որը գտնվում է ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1 հասցեում: Ընկերությունը գրասենյակային տարածքը ճանաչել է

օգտագործման իրավունքով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն վարձակալության ժամկետի ընթացքում, որը կազմում է երեք տարի: Համապատասխան «օգտագործման իրավունքի ձևով ակտիվները» ներկայացված են «հիմնական միջոցներ» հոդվածի ներքո:

20 Հաշվեգրված պարտավորություններ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Հաշվեգրված պարտավորություններ աշխատակիցների նկատմամբ	73,759	23,126
Հաշվեգրված հարկեր և տուրքեր	11,609	-
Հաշվեգրված վճարներ մասնագիտական ծառայությունների դիմաց	11,976	8,601
Այլ	11,344	2,110
Ընդամենը հաշվեգրված պարտավորություններ	**108,688**	**33,837**

21 Սեփական կապիտալ

21.1 Բաժնետիրական կապիտալ

Բաժնետոմսերի քանակը, եթե այլ բան նշված չէ	Սովորական բաժնետոմսեր	Սովորական բաժնետոմսեր
	2025թ.	2024թ.
Սովորական բաժնետոմսերի քանակը, յուրաքանչյուրը՝ 414.96 ՀՀ դրամ	840,280	840,280

Ընկերությունն ունի սովորական բաժնետոմսերի մեկ դաս, որը հաստատուն եկամտի նկատմամբ իրավունք չունի:

21.2 Պահուստային կապիտալ

Պահուստային կապիտալին կուտակված շահույթից կատարվում են հատկացումներ: Այդ հատկացումները կարգավորվում են Ընկերության կանոնադրությամբ և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, որոնց համաձայն Ընկերությունը պարտավորված է ստեղծել թողարկված բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով չբաշխվող պահուստ: Այս պահուստը ստեղծվում է Ընկերության ապագա հնարավոր կորուստները ծածկելու նպատակով:

22 Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմերը ներառում են մայր ընկերությունը, ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերությունները, հիմնական ղեկավար անձնակազմը և այլն, ինչպես նկարագրված է ստորև:

22.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է «Էքուիթի Գրուփ» ԼԹԴ-ի կողմից, որին պատկանում է Ընկերության բաժնետոմսերի 100%: «Էքուիթի Գրուփ» ԼԹԴ-ն գործունեություն է ծավալում Սենթ Հելիերում՝ Ջերսի և չի պատրաստում հրապարակվող ֆինանսական հաշվետվություններ: «Էքուիթի Գրուփ» ԼԹԴ-ի բաժնետոմսերի մեծամասնությունը վերահսկվում է Աբդուլ Ռաուֆ Ալ Բիթարի կողմից:

22.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Գործարքներ

	2025թ.	2024թ.
Հիմնական ղեկավար անձնակազմ		
Աշխատավարձ և այլ վճարումներ	51,817	77,397
Պարտադիր կենսաթոշակային համակարգի հատկացումներ	1,663	3,150
Ապահովագրություն	1,163	1,917
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Ծառայությունների մատուցում	614,407	654,162
Ծառայությունների ձեռքբերում	27,819	75,719

Մնացորդներ	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Հիմնական ղեկավար անձնակազմ		
Հաշվեգրված աշխատավարձ և այլ փոխհատուցումներ	15,180	8,934
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Միջնորդներից ստացման ենթակա գումարներ	43,251	55,062
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	157,712	79,312

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ղեկավարությունը և նրանց անմիջական ազգականները «Էքուիթի Գրուփ» ԼԹԴ-ի կապիտալում բաժնետոմսեր չունեն:

23 Պայմանականություններ

23.1 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

24 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են Ծանոթագրություն 4.8-ում: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև:

Ֆինանսական ակտիվներ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	24,942	72,270
Կարճաժամկետ բանկային ավանդներ	95,451	95,459
Միջնորդներից ստացման ենթակա գումարներ	43,251	55,061
Ամորտիզացված արժեքով ներդրումներ	505,504	433,809
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	158,624	105,247
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	**827,772**	**761,846**
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ		
Ածանցյալ ակտիվներ	1,092	77
Ընդամենը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	**1,092**	**77**
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**828,864**	**761,923**

Ֆինանսական պարտավորություններ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ		
Կանխավճարներ հաճախորդներից	79,145	87,715
Վարձակալության գծով պարտավորություններ	8,022	46,363
Հաշվեգրված պարտավորություններ	97,079	33,837
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	**184,244**	**167,913**
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ		
Ածանցյալ պարտավորություններ	801	484
Ընդամենը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	**801**	**484**
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**185,045**	**168,397**

Ընկերության ֆինանսական գործիքների ռիսկերի նկարագրությունը՝ ներառյալ ռիսկի կառավարման նպատակները և քաղաքականությունը, արտացոլված են Ծանոթագրություն 245-ում:

Իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները չափելիս օգտագործված մեթոդները նկարագրված են Ծանոթագրություն 26.1-ում:

Ստորև նշված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները համարվում են իրական արժեքի ողջամիտ մոտարկում.

- առևտրային և այլ դեբիտորական պարտքեր
- դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, և
- առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր:

25 Ֆինանսական գործիքների ռիսկ

Ռիսկի կառավարման քաղաքականությունը և նպատակները

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ընկերությունը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

25.1 Շուկայական ռիսկի վերլուծություն

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, որը հիմնականում բխում է գործառնական գործունեությունից:

Արտարժույթի ռիսկ

Ընկերությունը հիմնականում գործարքներ է իրականացնում արժութային ռիսկ պարունակող գործիքներով: Բացի այդ, Ընկերությունն ունի արտարժույթով արտահայտված ակտիվներ: Արժութային դիրքերը ներառում են նաև արտարժույթով արտահայտված սեփական միջոցներ, որոնք պահվում են արտասահմանյան շուկաներում գործարքների իրականացումը ապահովելու նպատակով:

Ընկերությունն օգտագործում է հայկական դրամն արտարժութային փոխարժեքային ռիսկի վերլուծության համար: Ընկերությունը նվազեցնում է արտարժութային ռիսկը՝ շարունակաբար վերահսկելով արտարժույթի ազդեցությունը, համապատասխանեցնելով արտարժույթով ստացված դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, իսկ անհրաժեշտության դեպքում ուղղիչ միջոցառումներ է նախաձեռնում:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև: Ներկայացված գումարները փոխարկված են հայկական դրամի՝ հաշվետու ժամանակաշրջանի ավարտի փոխարժեքով:

Հոդված

31 դեկտեմբերի 2025թ.	ԱՄՆ դոլար	Եվրո	Ֆունտ ստեռլինգ
Ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	10,992	10,663	497
Միջնորդներից ստացման ենթակա գումարներ	17,046	26,847	-
Ածանցյալ ակտիվներ	1,092	-	-
Ամորտիզացված արժեքով ներդրումներ	107,001	-	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	157,712	-	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**293,843**	**37,510**	**497**
Ֆինանսական պարտավորություններ			
Հաճախորդներից ստացված կանխավճարներ	17,827	30,234	30,682
Ածանցյալ պարտավորություններ	801	-	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**18,628**	**30,234**	**30,682**

Հոդված

31 դեկտեմբերի 2025թ.	ԱՄՆ դոլար	Եվրո	Ֆունտ ստեռլինգ
Զուտ արդյունք	**275,215**	**7,276**	**(30,185)**

Հոդված

31 դեկտեմբերի 2024թ.	ԱՄՆ դոլար	Եվրո	Ֆունտ ստեռլինգ
Ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	57,750	6,977	4,749
Միջնորդներից ստացման ենթակա գումարներ	18,782	36,357	-
Ածանցյալ ակտիվներ	77	-	-
Ամորտիզացված արժեքով ներդրումներ	80,204	-	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	75,719	-	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**232,532**	**43,334**	**4,749**
Ֆինանսական պարտավորություններ			
Հաճախորդներից ստացված կանխավճարներ	54,335	34,523	(1,082)
Այլ պարտավորություններ	243	-	-
Ածանցյալ պարտավորություններ	484	-	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**55,062**	**34,523**	**(1,082)**
Զուտ արդյունք	**177,470**	**8,811**	**5,831**

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ արտարժույթներ նկատմամբ դրամի 5% (2024թ.՝ 10%) աճին/նվազմանը: 5%-ը ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 5%-ով:

Դրամի արժևորումն ԱՄՆ դոլարի, եվրոյի և ֆունտ ստեռլինգի նկատմամբ 5%-ով (2024թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

	2025թ.	2024թ.
ԱՄՆ դոլար	13,761	17,747
Եվրո	364	881
Ֆունտ ստեռլինգ	(1,509)	583

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Ընկերության՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

25.2 Պարտքային ռիսկի վերլուծություն

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել:

Ընկերության ղեկավարությունը զգուշորեն կառավարում է վարկային ռիսկը: Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Ընկերության պարտքային ռիսկի կառավարման

քաղաքականությունից և ընթացակարգերից: Ռիսկերի կառավարման նպատակով պարտքային ռիսկի գնահատումը ներառում է մոդելների օգտագործում, քանի որ ռիսկը տատանվում է՝ կախված շուկայական պայմաններից, դրամական միջոցների ակնկալվող հոսքերից և ժամանակի ընթացքից:

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական գործիքների հաշվեկշռային արժեքներով՝

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	24,942	72,270
Կարճաժամկետ ավանդներ	95,451	95,459
Միջնորդներից ստացման ենթակա գումարներ	43,251	55,061
Ամորտիզացված արժեքով ներդրումներ	505,504	433,809
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	158,624	105,247
Աճանցյալ ակտիվներ	1,092	77
Ընդամենը ամորտիզացված արժեքով ֆինանսական ակտիվներ	**828,864**	**761,923**

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների և ավանդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է ավանդները տարբեր բանկերում և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Ամորտիզացված արժեքով չափվող պարտատոմսերի մեջ Ընկերության ներդրումները ցածր պարտքային ռիսկ են պարունակում, քանի որ դրանք պահվում են բարձր վարկանիշ ունեցող գործընկերների մոտ և ֆինանսական հաստատություններում:

25.3 Իրացվելիության ռիսկի վերլուծություն

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Ընկերության ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Ընկերությունը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական հոսքերը:

2025թ.	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի	Ընդամենը
Ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	24,942	-	-	-	24,942
Կարճաժամկետ բանկային ավանդներ	-	-	95,451	-	95,451
Ամորտիզացված արժեքով ներդրումներ	-	54,258	293,158	160,378	507,794
Միջնորդներից ստացման ենթակա գումարներ	43,251	-	-	-	43,251

2025թ.	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի	Ընդամենը
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	158,624	-	-	158,624
	68,193	**212,882**	**388,609**	**160,378**	**830,062**
Պարտավորություններ					
Վարձակալության գծով պարտավորություններ	3,150	6,300	-	-	9,450
Հաճախորդներից ստացված կանխավճարներ	79,145	-	-	-	79,145
Այլ պարտավորություններ	23,320	-	-	-	23,320
Ընդամենը հնարավոր ապագա վճարումներ ֆինանսական պարտավորությունների գծով	**105,615**	**6,300**	**-**	**-**	**111,915**
Իրացվելիության զուտ դիրք	**(37,422)**	**206,582**	**388,609**	**160,378**	**718,147**

2024թ.	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի	Ընդամենը
Ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	72,270	-	-	-	72,270
Կարճաժամկետ բանկային ավանդներ	-	-	95,458	-	95,458
Ամորտիզացված արժեքով ներդրումներ	-	-	169,514	264,295	433,809
Միջնորդներից ստացման ենթակա գումարներ	55,061	-	-	-	55,061
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	105,247	-	-	-	105,247
	232,578	**-**	**264,972**	**264,295**	**761,845**
Պարտավորություններ					
Վարձակալության գծով պարտավորություններ	2,971	11,458	23,913	8,021	46,363
Հաճախորդներից ստացված կանխավճարներ	87,715	-	-	-	87,715
Այլ պարտավորություններ	10,711	-	-	-	10,711
Ընդամենը հնարավոր ապագա վճարումներ ֆինանսական պարտավորությունների գծով	**101,397**	**11,458**	**23,913**	**8,021**	**144,789**
Իրացվելիության զուտ դիրք	**131,181**	**(11,458)**	**241,059**	**256,274**	**617,056**

26 Իրական արժեքի չափում

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

26.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Ընկերության ղեկավարությունը ֆինանսական հաշվետվության նպատակներով իրականացնում է ֆինանսական գործիքների գնահատում: Գնահատման տեխնիկաները ընտրվում են՝ հիմնվելով յուրաքանչյուր գործիքի բնութագրից, շուկայական տվյալների հիման վրա տեղեկության առավելագույնս արդյունավետ օգտագործման նպատակով: Ֆինանսական գործիքները գնահատելու առանձնահատուկ տեխնիկաները ներառում են՝

- բաց դիրքերի համար՝ հղում կատարելով ակտիվ շուկայի գործարքներին,
- այլ ֆինանսական գործիքների համար՝ դրամական միջոցների հոսքի զեղչման վերլուծություն:

Ընկերությունը ածանցյալ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները դասակարգել է իրական արժեքի հիերարխիայի 2-րդ մակարդակում:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց համար իրական արժեքը բացահայտված է

Ընկերության ֆինանսական գործիքների արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Բանկային ավանդների և պարտատոմսերում ներդրումների հաշվեկշռային արժեքը համարվում են իրական արժեքի խելամիտ գնահատում: Իրական արժեքի գնահատումը որոշվում է՝ օգտագործելով ներկա արժեքի հաշվարկման մոտեցումը: Իրական արժեքը գնահատվել է՝ զեղչելով պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը շուկայական տոկոսադրույքով: Ամենազգալի փոփոխականը զեղչման տոկոսադրույքն է շուկայական տոկոսադրույքն է:

27 Կապիտալի ռիսկի քաղաքականություններ և ընթացակարգեր

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և բաժնետերերին բավարար եկամուտ մատակարարի:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, պահուստներն ու կուտակված շահույթը:

Ղեկավարությունը գնահատում է Ընկերության կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք՝ խուսափելով չափազանց մեծ լծակավորումից (լեվերիջ): Հաշվի են առնվում Ընկերության վարկերի տարբեր դասերի ստորադասության մակարդակները: Ընկերությունը կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված ռիսկի բնույթից: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ ճշգրտելու նպատակով Ընկերությունը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժնի գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին, թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվները՝ պարտքը նվազեցնելու համար:

Կապիտալի համարժեքություն

Ընկերության կապիտալի ռիսկի կառավարման առաջնային նպատակներն են՝ համոզվել, որ Ընկերությունը ենթարկվում է արտաքին միջավայրից պարտադրված կապիտալի պահանջներին և որ Ընկերությունը պահպանում է ուժեղ պարտքային վարկանիշ և կապիտալի հարաբերակցություն՝ իր գործունեությունն ապահովելու և բաժնետերերի արժեքը առավելագույնի հասցնելու նպատակով:

ՀՀ ԿԲ-ը ներդրումային ընկերությունների ընդհանուր կապիտալի համար սահմանել է հետևյալ տնտեսական նորմատիվը.

	Փաստացի կապիտալ 31 դեկտեմբերի 2025թ.	Փաստացի կապիտալ 31 դեկտեմբերի 2024թ.	ՀՀ ԿԲ-ի սահմանած նորմատիվ
Ընդհանուր կապիտալի նվազագույն չափ	674,827	675,005	300,000
Բաժնետիրական կապիտալի նվազագույն չափ	348,683	348,683	1,000

28 Հետհաշվեկշռային իրադարձություններ

Հաշվետվության ամսաթվի և հաստատման ամսաթվի միջև որևէ ճշգրտող կամ նշանակալի չճշգրտող իրադարձություն տեղի չի ունեցել: